ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Պարույր Սևակը նրա մասին գրել է. «*Թերևս միայն Արևելքի բնությունը, անկարգության հասնող իր շռայլությամբ ու հմայքով կարող էր մարդուն պարգևել այնպիսի ունակություններ, որոնցով հնարավոր էր ականավոր դարձնել առնվազն վեց երջանիկ մարդու՝ մեկին իբրև կախարդ երգիչ, մյուսին՝ իբրև զմայլելի նվագածու, երրորդին՝ իբրև անմոռանալի երգաստեղծ-կոմպոզիտոր, իսկ մնացած երեքին՝ իբրև այնպիսի բանաստեղծներ, որոնցից յուրաքանչյուրը պիտի հպարտություն պատճառեր այն ազգին, որի լեզվով բանաստեղծելիս լիներ: Բայց Արևելքի շքեղ բնությունը շնորհների այդպիսի մի բազմազանություն լցրել էր մի հոգու մեջ, շռայլել մեկ սրտի, կապել մեկ անվան….*»:

(2.5)

- **Ո՞ւմ նկատի ունի Պարույր Սևակը այս տողերը գրելիս:** *(1)*
- **Մեկնաբանիր մեջբերման «հերոսին» բնութագրող բառերի իմաստը:** *(1.5)*

Պատասխան՝

- *Նկատի ունի Սայաթ-Նովային*
- *Նա իր ստեղծագործություններում մեկտեղած ներկայացնում է ողջ արևելքի արվեստը: Հայտնի է նաև, որ հայերենից զատ գրել է նաև վրացերեն, թուրքերեն:*

2. Հայ նկարիչ Հովհաննես Այվազովսկին 1899 թվականին ստեղծում է մի նկար «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին Սբ. Ղազար կղզում» վերնագրով:

(2)

- **Ի՞նչ նպատակով էր անգլիացի բանաստեղծը գտնվում այնտեղ**: *(1)*

- **Ինչպե՞ս է կոչվում այդ նշանավոր ուսումակրթական, գիտական հաստատությունը:** *(1)*

Պատասխան՝ *Նպատակը հայերեն սովորելն էր, որից հետո Բայրոնը անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն թարգմանեց մի շարք կրոնական և աշխարհիկ ձեռագրեր, ինչպես նաև կազմեց անգլերեն-հայերեն բառարան, հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն քերականության դասագրքեր:*

Մխիթարյան միաբանություն՝ *հիմնադիր Մխիթար Սեբաստացու պատվին:*

3.

- **Ինչպե՞ս է ծնունդ առել «ավգյան ախոռ» արտահայտությունը:** *(1.5)*
- **Ո՞րն է դրա փոխաբերական իմաստը:** *(1.5)*

(3)

Պատասխան՝

- *Ավգիաս արքայի ախոռներում կուտակված հսկա աղբակույտը ոչ մի ծառա ի զորու չէր մաքրել: Հզոր Հերակլեսը, նախիրների տասներորդ մասը ստանալու պայմանով, առաջարկում է իր ծառայությունը: Նա երկու գետերի հունը փոխելով՝ ջրերի ուժգին հոսանքը ուղղում է ախոռի կողմը և մաքրում այն: Սակայն Ավգիաս արքան պայմանը անկատար է թողնում: Մոլեգնած Հերակլեսը դատարկաձեռն իր երկիր է վերադառնում: Այս զրույցից էլ սկիզբ է առել «ավգյան ախոռ» արտահայտությունը:*
- *Փոխաբերական իմաստով այդպես են անվանում շատ կեղտոտ, աղտեղությունով լի վայրին, որը հանկարծակի և արագորեն մաքրվում է:*

4. *Դեռ դպրոցական տարիներից սկսեց ստեղծագործել. գրում էր մինչ ուշ գիշեր: Դարբին հայրը արթնանում էր կեսգիշերին և տեսնելով կանթեղի աղոտ լույսի տակ գրքի կամ թղթի վրա հակված որդուն՝ խիստ ձայնով ասում էր. «Օհ, տահա նստեր ես, լո՞ւյս կը վառես» :*

(1.75)

- **Ո՞վ էր «Իսկյուտարի Ենի-Մահալլե թաղի» տնակներից մեկի այս բնակիչը:** *(1)*
- **Գիտես արդյո՞ք՝ քանի գարուն ապրեց նա:** *(0.75)*

Պատասխան՝ *Պետրոս Դուրյան*

Ապրեց ընդամենը 21 գարուն:

5. *«Նայում է վար – քաղցի ու մերկության սոսկալի պատկեր, ուր մարդիկ շներից չէին տարբերվում: Նայում է վեր- <...> ու անհոգության կենդանի մարմնացում»:*

(1.5)

- **Տրամաբանորեն լրացնելով բաց թողնված բառը՝ փորձիր ներկայացնել երկու «աշխարհների» հակադրությունը Շիրվանզադեի «Քառս» վեպի համատեքստում:**

Պատասխան՝ *Բաց թողնված բառն է «կշտության» /ընդունելի են հոմանիշ այլ տարբերակներ/ : Շիրվանզադեն իր վեպում, ներկայացնելով մեկ ընտանիքի՝ Մարկոս աղա Ալիմյանի և նրա որդիների կյանքի պատմությունը, ստեղծում է այն գաղջ մթնոլորտի ռեալիստական պատկերը, որտեղ կողք կողքի ապրում էր մի կողմից թշվառը, քաղցածն*

ու ամեն բանից զրկվածը, մյուս կողմից հղփացած, ցոփ ու շվայտ կյանքով ապրող «ոսկե երիտասարդությունն» ու ընչաքաղց հարստահարողը:

6. *«Քաջերի սահմանը նրանց զենքն է. որքան կտրի՝ այնքան էլ կտիրի»:*
«Քաջերի սերունդները քաջեր են»:
«Մահկանացուների ժամանակը կարճ է և անհայտ»:

(1.75)

- **Ո՞ր հեղինակի ո՞ր ստեղծագործությունից են թևավոր խոսքեր դարձած այս ասույթները:**

Պատասխան՝ *Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»*

7. ա/*Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝գրիչ, անոնք ատելություն են, մենք՝սեր …*

բ/*…տասներկու հատ պզտիկ, տասներկու հատ միջին, տասներկու հատ մեծ, տասներկու հատ ոտքի վրա, տասներկու հատ աթոռի մը վրա բազմած, տասներկու հատ քովընտի նստած, տասներկու հատ շիտակ նստած, տասներկու հատ ոտք ոտքի վրա դրած, տասներկու հատ ձեռք ձեռքի վրա, տասներկու հատ գլուխը ձեռքին կռնթած, տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրա դրած, տասներկու հատ պառկած, տասներկու հատ ձեռքը գավազան բռնած, տասներկու հատ խնդումներես, տասներկու հատ տխուր դեմքով…*

գ/ *... հազար անգամ զղջացած եմ, երկու հազար անգամ անեծք կարդացած եմ <...> ըլլալուս համար. ո՛ւր էր, թե բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի և... մեռանեի. մեր ազգին մեջ հիվանդությունը բժշկութենեն աղեկ է, վասնզի տգիտությունն գիտութենեն ավելի կքաջալերվի... թեթևությունը ծանրութենեն ավելի հարգ կը գտնե, մոլիներն առաքինիներեն ավելի պատիվ կը վայելեն...*

դ/*Հառաջիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, աջ կը կոչենք և դեպի ձախ կերթանք, ապագա կըսենք և դեպի անցյալը կը վազենք...*

(2)

- **Նշիր, թե վերոնշյալ հատվածներից ո՞րը ո՞ր «մեծապատիվ մուրացկանի» խոսքն է:**

1.բժիշկ *3.լուսանկարիչ*

2.ուսուցիչ *4.բանաստեղծ*

Պատասխան՝

ա/- *4.բանաստեղծ*

բ/- *3.լուսանկարիչ*

գ/- *1.բժիշկ*

դ/- *2.ուսուցիչ*

8. *Միամիտ, շոյելով, ուրու, մութի, չեմ, հավատամ, ճերմակ, քեզ, թեթև, փորձ, մեղմիվ, տառապանքս, սահուն, մի, թև, անցավ, գունատ, որպես, ունի, իրիկնաժամին, շորերով, պես, մի, թփերն, անցավ, մրահոն, մի, օրորող, կույս, էր, ստվեր, քեզ, պես, աղջիկ, հովի, կոտրեց, ծաղիկ, մի, ու, քնքուշ, քայլերով, սիրտս, կանաչ, աննշմար, պատանի:*

(3.5)

- **Բառերի այս խառնաշփոթից ստացիր Վ. Տերյանի և Ավ. Իսահակյանի բանաստեղծություններից մեկական տուն:** *(2.5)*

- **Որո՞նք են այդ բանաստեղծությունները:** *(1.5)*

Պատասխան՝ *Սահուն քայլերով աննշմար, որպես քնքուշ մութի թև,*
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով….

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի-.
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի…

Վ. Տերյան «Տխրություն»

Ավ. Իսահակյան «Մի մրահոն աղջիկ տեսա»

9.*«Ո՛վ սուրբ գիշեր, հոսեցուր սրտիս մեջ կաթը քու սպիտակ խորհուրդիդ և զիս քու անբիծ գորովանքիդ հավիտենության մեջ ապրեցուր, քու հրայրքիդ բոցավառ ծիածանը շողացուր հոգվույս խավարին մեջ…»*

(2)

- **«Ցայգանվագ» կոչվող այս արձակ ստեղծագործությունը ո՞ւմ գրչին է պատկանում:** *(1)*
- **Ձեզ ծանոթ ո՞ր բանաստեղծությունն է հիշեցնում:** *(1)*

Պատասխան՝

- *Մ. Մեծարենց*
- *«Ձմրան պարզ գիշեր»*

Համբոյրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծըծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց։

Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,
Հոսէ՛ սրտիս մէջ դիւթանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերէն մեղրիկ
Պուտ պուտ կաթեցո՛ւր հոգւոյս սիրաջեր…